ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՐԿՈՒ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ԱՆԴԱՄ

Նորին Սբ. Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն ընտրվել է Համաշխարհային ինֆորմատիկացիայի /Կանադա/ և Ժողովուրդների Համաշխարհային «Էլիտա» /Հարավսլավիա/ ակադեմիաների անդամ: Սեպտեմբերի 26-ին այցելելով Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, այս մասին հայտնեցին և անդամության դիպլոմները Վեհափառ Հայրապետին հանձնեցին Համաշխարհային ինֆորմատիկացիայի ակադեմիայի նախագահ Սկատ Վարդանյանը և «Էլիտա» ակադեմիայի նախագահ Միլան Զեթսը:

Պրն. Վարդանյանը տեղեկացրեց, որ երկու ակադեմիաներն այն 80 կազմակերպություններից են, որոնք գործում են ՄԱԿ-ի հովանու ներքո: Այս ակադեմիաների անդամներ են Ալեքսիյ Բ Պատրիարքը, Բորիս Ելցինը, Բուտրոս Ղալին և նշանավոր այլ դեմքեր: Պրն. Վարդանյանը հաղորդեց նաև, որ երկու ակադեմիաները Հայաստանում կունենան իրենց մասնաճյուղերը, նրանց համատեղ ջանքերով Երևանում հիմնվում է բժշկական կենտրոն:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց շնորհված տիտղոսի համար՝ այն դիտելով իբրև Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի նկատմամբ ցուցաբերած բարձր գնահատանքի արտահայտություն: Վեհափառ Հայրապետը, իր օրհնանքը տալով ներկաներին, հույս հայտնեց, որ ակադեմիաների գործունեությունը կնպաստի Հայաստանում գիտական մտքի զարգացմանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ